«ՀԱՍՏԱՏՎԱԾ»

*ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ*
*Խորհրդի* «30» նոյեմբերի 2022թ.

թիվ 49/01Լ-Հ որոշմամբ

Խորհրդի նախագահ

Գրիգոր Հովհաննիսյան_____

# ԿԱՐԳ

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

Ուժի մեջ է՝ 2022թ-ի նոյեմբերի «30»-ից

# ԲԱԺԻՆ I. ՆՊԱՏԱԿԸ, ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ, ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

## ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿԸ

1. Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգով սահմանվում են ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից մրցույթների անցկացման նպատակով անկախ աուդիտորական կազմակերպություններին ներկայացվող պահանջները և չափանիշները, մրցութային առաջարկությունների գնահատման մեթոդները, մրցույթների կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգն ու ժամանակացույցը:

## ԳԼՈՒԽ 2. ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

2. Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգի պահանջները տարածվում են անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության գործընթացներում ներգրավված ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ աշխատողների վրա:

## ԳԼՈՒԽ 3. ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

3. Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգն առնչվում է հետևյալ հիմնական փաստաթղթերի հետ.
   1) «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք:
   2) «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենք:
   3) «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենք:
   4) ՀՀ ԿԲ Խորհրդի 2022 թվականի հոկտեմբերի 04-ի թիվ 174-Ն որոշմամբ հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող չափանիշները» Կանոնակարգ 22:
   5) ՀՀ ԿԲ Խորհրդի 2013 թվականի ապրիլի 16-ի թիվ 102-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4:
   6) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2021 թվականի հունվարի 14-ի թիվ 02/01Լ-Հ որոշմամբ հաստատված «Իրավական ակտերի նախագծերի պատրաստման և ընդունման կարգ»:

7) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2019 թվականի հուլիսի 10-ի թիվ 27/03Լ-Հ որոշմամբ հաստատված «Բանկի տեղեկատվական ակտիվների դասակարգման և նույնականացման կարգ»:
8) ԻՍՕ/ԻԷԿ 27001 «Տեղեկատվական տեխնոլոգիաներ. Անվտանգության ապահովման մեխանիզմներ. Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգեր.Պահանջներ»:

## ԳԼՈՒԽ 4. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

4. Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝
   1) ***Բանկ՝*** ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ:
   2) ***Կարգ՝*** Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգ:
   3) ***Մասնագիտացված կառույց***՝ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մասնագիտացված կառույց, այն է՝ քաղաքականություն իրականացնող մարմնի հավատարմագրած աուդիտորների, փորձագետ հաշվապահների, ինչպես նաև աուդիտորական կազմակերպությունների (այսուհետ՝ Մասնագիտացված կառույցի անդամ) անդամության հիման վրա գործող հասարակական կազմակերպություն:
   4) ***Աուդիտորական կազմակերպության Պատասխանատու աուդիտոր՝*** Աուդիտորական կազմակերպության աուդիտորական եզրակացությունը ստորագրող անձ:
   5) ***Աուդիտ իրականացնող խումբ՝*** Աուդիտորական կազմակերպության աշխատակիցների խումբ, որն անմիջականորեն ընդգրկված է Բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման մեջ:
   6) ***Ֆինանսական կազմակերպություն՝*** Բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, ներդրումային ֆոնդի կառավարիչ:
   7) ***Հանձնաժողով՝*** Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության մրցութային հանձնաժողով:

## ԳԼՈՒԽ 5. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

5. Խմբագրություն 04, փոփոխություններ են կատարվել Կարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետում, 7-րդ, 8-րդ, 29-րդ կետերում, 44-րդ կետի 1-ին ենթակետում, ավելացվել են 3-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը, 4-րդ կետի 3-րդ ենթակետը, 9-րդ, 10-րդ և 11-րդ կետերը, հանվել են նախկին 3-րդ կետի 3-րդ ենթակետը, 9-րդ 10-րդ և 11-րդ կետերը:

## ԳԼՈՒԽ 6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

6. Կարգն ունի հետևյալ հավելվածները.
   1) Հավելված 1՝ Մրցույթի մասին հրապարակային ծանուցման ձև:
   2) Հավելված 2՝ Գրանցամատյան՝ Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության հայտերի:
   3) Հավելված 3՝ Տեղեկանք՝ մրցույթի հայտն ընդունելու վերաբերյալ:
   4) Հավելված 4՝ Տեղեկանք՝ մրցույթի հայտը մերժելու վերաբերյալ:

# ԲԱԺԻՆ II. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7. Բանկի կողմից Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրությունը կատարվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Աուդիտորական գործունեության մասին», «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, ինչպես նաև աուդիտորական գործունեությանը վերաբերող նորմեր պարունակող այլ օրենքների և իրավական ակտերի ու Կարգի դրույթների համաձայն:

## ԳԼՈՒԽ 2. ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

8. Բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող աուդիտորական կազմակերպությունը պետք է լինի Մասնագիտացված կառույցի անդամ և ունենա բանկում աուդիտի իրականացման առնվազն 5 տարվա աուդիտորական աշխատանքի փորձ: Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում ըստ միջազգային խմբի տարեկան համախառն հասույթի մակարդակի առաջին 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող աուդիտորական կազմակերպությունների վրա:
9. Աուդիտորական կազմակերպության Պատասխանատու աուդիտորը պետք է լինի Մասնագիտացված կառույցի անդամ, ունենա աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ, ինչպես նաև՝ Մասնագիտացված կառույցի կողմից տրված աուդիտորի որակավորում և միջազգային հաշվապահական կամ աուդիտորական որակավորում (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ):
10. Աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է լինեն Մասնագիտացված կառույցի անդամ, ունենան աուդիտորական

կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ, ինչպես նաև՝ Մասնագիտացված կառույցի կողմից տրված աուդիտորի որակավորում կամ միջազգային հաշվապահական կամ աուդիտորական որակավորում (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ):

11. Բանկի և աուդիտորական կազմակերպության միջև պայմանագիրը կարող է կնքվել մինչև 3 տարի ժամկետով: Աուդիտորական կազմակերպությունը կարող է իրականացնել Բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը անընդմեջ առավելագույնը 6 տարի, ընդ որում, տվյալ աուդիտորական կազմակերպության Պատասխանատու աուդիտորը կարող է իրականացնել Բանկի աուդիտը առավելագույնը 3 տարի: Աուդիտորական կազմակերպությունը Կարգի սույն կետում նշված 6 տարի անընդմեջ աուդիտի իրականացման դեպքում չի կարող իրականացնել Բանկի աուդիտը առնվազն 3 տարի:

## ԳԼՈՒԽ 3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

12. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝
    1) Հանձնաժողովի նախագահ՝ Գործադիր տնօրենի առաջին տեղակալ,
    2) Հանձնաժողովի անդամ՝ Գլխավոր հաշվապահ,
    3) Հանձնաժողովի անդամ՝ Ներքին աուդիտի վարչության պետ/Գլխավոր աուդիտոր,
    4) Հանձնաժողովի անդամ՝ Իրավաբանական վարչության պետ,
    5) Հանձնաժողովի անդամ՝ Ռազմավարության և մեթոդաբանության վարչության պետ,
    6) Հանձնաժողովի քարտուղար՝ Աշխատակազմի ղեկավար:
13. Բանկի բաժնետերերի Տարեկան ընդհանուր ժողովից ոչ ուշ, քան 90 օր առաջ Հանձնաժողովը հաստատում է մրցույթի մասին հրապարակային ծանուցման տեքստը (Հավելված 1) և Կարգի 18-րդ կետով սահմանված ժամկետում կատարում է մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցումը:
14. Հանձնաժողովը Կարգով սահմանված ընթացակարգով և ժամկետներում բացում և գնահատում է մրցույթի հայտերը, ինչպես նաև որոշում է մրցույթի հաղթողին:
15. Հանձնաժողովը վարում է մրցութային հայտերի գրանցամատյան (Հավելված 2):
16. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում և Հանձնաժողովի նախագահին ու անդամներին ստորագրման են ներկայացվում Հանձնաժողովի քարտուղարի կողմից:
17. Հանձնաժողովը որոշում է ընդունում ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ ձայների հավասար բաշխվելու դեպքում Հանձնաժողովի նախագահի ձայնը որոշիչ է:

## ԳԼՈՒԽ 4. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

18. Հանձնաժողովը մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցումը կատարում է մրցույթի հայտերն ընդունելու վերջնաժամկետից առնվազն 30 օր առաջ:
19. Մրցույթի մասին հրապարակային ծանուցումը կատարվում է նվազագույնը 1000 տպաքանակ ունեցող թերթում և տեղադրվում համացանցի Բանկի տնային էջում:

## ԳԼՈՒԽ 5. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

20. Հանձնաժողովը մրցույթի մասին հրապարակային ծանուցում կատարելուց հետո կարող է կատարել փոփոխություն և/կամ լրացում:
21. Մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ փոփոխությունները և/կամ լրացումները կատարվում են՝ պահպանելով Կարգի 19-րդ կետի պահանջները՝ մրցույթի հայտերն ընդունելու վերջնաժամկետից առնվազն 10 օր առաջ:
22. Մրցույթի մասնակիցները, մինչև մրցույթի հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտը, կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտերը: Մրցույթի հայտերի փոփոխությունը կատարվում է՝ ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը:

## ԳԼՈՒԽ 6. ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

23. Մրցույթին մասնակցել ցանկացող աուդիտորական կազմակերպությունները հրապարակային ծանուցման մեջ նշված ժամկետներում Բանկ են ներկայացնում մրցութային առաջարկությունների երկու փաթեթ՝ <u>երկու ծրարով</u>.
    1) առաջին փաթեթը պարունակում է աուդիտորական ծառայության տեխնիկական կողմերին վերաբերող առաջարկությունները,
    2) երկրորդ փաթեթը պարունակում է աուդիտորական ծառայության ֆինանսական կողմերին վերաբերող առաջարկությունները:
24. Մրցույթի հայտերը ներկայացվում են սոսնձված, կնքված և/կամ ստորագրված ծրարներով:
25. Ծրարների վրա պետք է կատարվեն մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված մրցույթի հայտի ներկայացման վայրի (հասցեի) և «չբացել մինչև հայտերի բացման նիստը» գրառումները:
26. Մրցույթի հայտը գրանցվում է առանձին գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարների վրա նշելով գրանցման համարը, տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը:
27. Մրցույթի հայտերն ընդունվում են մինչև հրապարակային ծանուցման մեջ նշված հայտերի ներկայացման վերջին օրվա ժամը 17:00-ն:

28. Բանկը հայտ ներկայացրած մասնակցին տալիս է սահմանված ձևի տեղեկանք (Հավելված 3)՝ մրցույթի հայտն ընդունելու մասին:

## ԳԼՈՒԽ 7. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՅՏ

29. Տեխնիկական հայտը պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունն ու փաստաթղթերը.
    1) մրցույթի մասնակցի լրիվ անվանումը, պետական գրանցման վկայականի, կանոնադրության, աուդիտորական գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի պատճենները, գտնվելու վայրը, հեռախոսահամարները,
    2) ծառայությունների մատուցման բնութագիրը,
    3) ծառայությունների մատուցման ժամկետները,
    4) այն բանկերի ցանկը, որոնց վերջին հինգ տարվա ընթացքում աուդիտորական կազմակերպությունը մատուցել է աուդիտորական ծառայություններ,
    5) աուդիտորների անունները, ազգանունները, աշխատանքային փորձը, աուդիտորական որակավորման և մասնագիտական վերապատրաստման վկայականների պատճենները,
    6) Աուդիտ իրականացնող խմբում ներգրավված աշխատակիցների, ներառյալ աուդիտ իրականացնող խմբի ղեկավարի միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (Էյ-Սի-Սի-Էյ, ՍԻ-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ և այլ) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական) կամ Մասնագիտական կառույցի կողմից տրված աուդիտորի որակավորումը հավաստող փաստաթուղթ (վկայական),
    7) Աուդիտորական կազմակերպության Պատասխանատու աուդիտորի միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (Էյ-Սի-Սի-Էյ, ՍԻ-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ և այլ) և Մասնագիտական կառույցի կողմից տրված աուդիտորի որակավորման փաստը հավաստող փաստաթղթեր (վկայական),
    8) Աուդիտորական կազմակերպության Պատասխանատու աուդիտորի առնվազն 3 տարվա աուդիտորի աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկատվությունը,
    9) աուդիտորական կազմակերպության և Բանկի միջև կնքվելիք պայմանագրով աուդիտորական կազմակերպության կողմից պարտականությունների չկատարման ռիսկի դիմաց փոխհատուցման կարգի և վճարի չափի սահմանումը,
    10) մրցույթի մասնակցի հայեցողությամբ այլ անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք կհաստատեն իր կողմից մատուցվելիք ծառայությունների որակը:

## ԳԼՈՒԽ 8. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՅՏ

30. Ֆինանսական հայտը պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունը.
    1) ծառայությունների մատուցման ընդհանուր գինը, որը պետք է ներառի բոլոր տեսակի ծախսերը, այդ թվում՝ հարկերը, տուրքերը և այլն,
    2) ծառայությունների մատուցման դիմաց վճարումների ժամանակացույցը,
    3) մրցույթի մասնակցի հայեցողությամբ ծառայությունների մատուցման ֆինանսական կողմին վերաբերող այլ անհրաժեշտ տեղեկատվություններ և հիմնավորող փաստաթղթեր:

## ԳԼՈՒԽ 9. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՂԹՈՂԻ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

31. Մրցութային առաջարկությունները գնահատելիս Հանձնաժողովն առաջնորդվում է Կարգով սահմանված պահանջներով և չափանիշներով՝ հաշվի առնելով նաև Բանկի և տվյալ աուդիտորական կազմակերպության միջև նախկինում առկա աշխատանքային փորձը:
32. Մրցութային առաջարկությունները գնահատվում են հետևյալ կերպ.
    1) Բացվում է ծրարը, գնահատվում է տեխնիկական հայտը՝ համաձայն Կարգի 44-րդ կետի:
    2) Այն դեպքում, երբ տեխնիկական փաթեթում ներառված առաջարկությունները բավարարում են Բանկի կողմից սահմանված տեխնիկական պայմաններին, մասնակիցների հետագա գնահատումն իրականացվում է Կարգի 46-րդ կետի համաձայն: Այն դեպքում, երբ մասնակիցը հավաքել է 17 և ավելի միավոր տվյալ մասնակիցն անցնում է մրցույթի երկրորդ փուլ, որտեղ գնահատվում են մրցույթի ֆինանսական հայտի պայմանները: Տեխնիկական պայմանների մասով 17 միավորից ցածր հավաքած մասնակցի մրցութային առաջարկությունը մերժվում է և նրա ֆինանսական հայտի ծրարը չի բացվում:
    3) Տեխնիկական փաթեթում ներառված առաջարկությունների մասով 17 և ավելի միավոր հավաքած մասնակիցները կամ միանձնյա մասնակիցը շարունակում են մասնակցել մրցույթին: Ֆինանսական հայտը գնահատվում է Հանձնաժողովի կողմից:
    4) Առաջին փուլն անցած մասնակիցների ֆինանսական փաթեթն ուսումնասիրվում է Հանձնաժողովի կողմից մրցույթի երկրորդ փուլում: Գնային առաջարկի վերաբերյալ Հանձնաժողովը կարող է բանակցել երկրորդ փուլ անցած և առավելագույն միավորներ հավաքած երկու մասնակիցների հետ: Հանձնաժողովը հաղթող է ճանաչում այն մասնակցին, ում գնային առաջարկն ի վերջո կլինի առավել ցածր:

5) Առաջին փուլը չանցած մասնակիցների գնային առաջարկները չեն քննարկվում, իսկ նրանց կողմից ներկայացված ֆինանսական փաթեթի ծրարը փակ վիճակում վերադարձվում է մասնակիցներին:

33. Մրցույթի հայտերը բացվում են Հանձնաժողովի նիստում հրապարակային ծանուցմամբ նախատեսված օրը և ժամին:
34. Մրցույթի հայտերի բացման նիստում հրապարակվում են.
    1) մրցույթի հայտը ներկայացրած յուրաքանչյուր անձի անվանումը,
    2) մրցույթի հայտեր ներկայացնելու համապատասխանությունը հրապարակային ծանուցման պահանջներին,
    3) տեղեկատվություն՝ մրցույթի հայտերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:
35. Մրցույթի մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել մրցույթի հայտերի բացման և մրցույթի հայտերի ամփոփման նիստերին:
36. Մրցույթի հայտերն ամփոփելու օրը Հանձնաժողովը կազմում է մրցույթի արդյունքների մասին արձանագրություն, որտեղ նշվում է.
    1) մրցույթի հայտերի բացման, ինչպես նաև մրցույթի հայտերի ամփոփման վայրը, ամսաթիվը, ինչպես նաև Հանձնաժողովի նիստին մասնակցած անդամների անունները և ազգանունները,
    2) մրցույթի մասնակիցների անվանումները և գտնվելու վայրը,
    3) հավաքած միավորների չափը և մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի անվանումը,
    4) այլ անհրաժեշտ տեղեկություններ:
37. Հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքը ներկայացվում է գրավոր, որը կցվում է արձանագրությանը և համարվում է դրա անբաժանելի մասը:
38. Մրցույթի արդյունքներն ամփոփելու օրը Հանձնաժողովի նախագահը և անդամները ստորագրում են մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը:
39. Մրցութային հանձնաժողովը մրցույթի մասնակիցներին մրցույթի արդյունքների մասին գրավոր ծանուցում է երեք աշխատանքային օրվա ընթացքում:

## ԳԼՈՒԽ 10.ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ՄԵՐԺՈՒՄԸ

40. Մրցույթի արդյունքներն ամփոփելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովը մրցույթում չհաղթած մասնակիցներին տրամադրում է սահմանված ձևի մերժման տեղեկանք (Հավելված 4)՝ նշելով մերժման հիմնավորումը:
41. Մրցութային առաջարկության մերժման հիմքերն են.
    1) տեխնիկական փաթեթում ներառված առաջարկությունների անհամապատասխանությունը Բանկի կողմից սահմանված տեխնիկական պայմաններին կամ դրանում անհրաժեշտ տեղեկատվության բացակայությունը,

2) ֆինանսական փաթեթում ներկայացրած առաջարկությունների անհամապատասխանությունը Բանկի կողմից սահմանված ֆինանսական առաջարկի պայմաններին կամ դրանում անհրաժեշտ տեղեկատվության բացակայությունը,
3) ֆինանսական փաթեթում ներառված առաջարկությունները Բանկի համար անընդունելի լինելը,
4) մրցույթի հայտը ներկայացվել է հրապարակային ծանուցման մեջ նշված ժամկետի խախտմամբ,
5) Կարգի 8-ից - 11-րդ կետերով սահմանված պահանջները պահպանված չլինելը:

## ԳԼՈՒԽ 11. ՄՐՑՈՒՅԹԻ ՉԿԱՅԱՑՈՒՄԸ

42. Հանձնաժողովի կողմից մրցույթը համարվում է չկայացած, եթե.
    1) հայտ չի ներկայացվել,
    2) ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված և/կամ Կարգով սահմանված այլ պահանջներին,
    3) արտակարգ իրավիճակների պատճառով անհնար է դարձել Հանձնաժողովի աշխատանքների կատարումը,
    4) մասնակիցների կողմից մրցույթի տեխնիկական փուլի հաղթահարման համար Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով պահանջվող միավորներ չհավաքելու դեպքում:
43. Մրցույթի չկայացման դեպքում Հանձնաժողովը 10 աշխատանքային օրվա ժամկետում հայտարարում և իրականացնում է նոր մրցույթ՝ պահպանելով Կարգի դրույթները:

## ԳԼՈՒԽ 12. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

44. Մրցութային առաջարկների տեխնիկական չափանիշներն ու դրանց գնահատումը կատարվում է հետևյալ եղանակով.
    1) Աուդիտորական կազմակերպության միջազգային ճանաչումը (հեղինակությունը)՝ գնահատվում է 1-3 միավոր.
        ա. Ըստ միջազգային խմբի տարեկան համախառն հասույթի մակարդակի առաջին 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող աուդիտորական կազմակերպություններ՝ 3 միավոր,
        բ. Միջազգային գործունեություն ծավալող ընկերություն, որը չի մտնում սույն ենթակետի «ա» պարբերությունում նշված կազմակերպությունների մեջ՝ 2 միավոր,

գ. Միայն ՀՀ-ում գործունեություն ծավալող ընկերություն՝ 1 միավոր:

2) Աուդիտորական կազմակերպության աշխատանքային փորձը գնահատվում է 1-ից 3 միավոր.
   ա. 11 տարի և ավելի՝ 3 միավոր,
   բ. 8-ից մինչև 11 տարի՝ 2 միավոր,
   գ. 5-ից մինչև 8 տարի՝ 1 միավոր:
3) Աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատողների որակավորման մակարդակը և աշխատանքային փորձը գնահատվում է 1-ից 2 միավոր: Գնահատելիս հաշվի է առնվում բանկային աուդիտի բնագավառում աշխատանքային փորձն ու ստաժը.
   ա. Աուդիտ իրականացնող խմբի անդամներից կեսից ավելին ունեն մինչև 5 տարի՝ 1 միավոր,
   բ. Աուդիտ իրականացնող խմբի անդամների կեսից ավելին ունեն 5 տարի և ավելի ՝ 2 միավոր:
4) Աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների՝ ներառյալ Աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորի, Աուդիտ իրականացնող խմբի ղեկավարի նվազագույնը 50%-ը պետք է ունենան միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորում (Էյ-Սի-Սի-Էյ, ՍԻ-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ և այլ), որից գերազանցումը գնահատվում է հետևյալ կերպ.
   ա. 50-65%՝ 1 միավոր,
   բ. 66-85%՝ 2 միավորում,
   գ. 86% և ավելի՝ 3 միավոր:
5) Աուդիտորական եզրակացության և/կամ հաշվետվության ներկայացման ժամկետները գնահատվում են առավելագույնը 2 միավոր, հետևյալ կերպ.
   ա. աուդիտի ավարտից 10 աշխատանքային օր՝ 2 միավոր,
   բ. աուդիտի ավարտից 11-20 օր՝ 1 միավոր,
   գ. աուդիտի ավարտից 21 օր և ավելի՝ 0 միավոր:
6) Աուդիտի անցկացման ժամկետները գնահատվում են 1-3 միավոր հետևյալ կերպ.
   ա. մինչև 20 աշխատանքային օր ներառյալ՝ 3 միավոր,
   բ. 21-25 օր՝ 2 միավոր,
   գ. 26 և ավելի՝ 1 միավոր:
7) Մասնագիտական գործունեության ձախողման համար մասնագիտական ռիսկի ապահովագրության առկայության և դրա ծածկույթի մեծության կամ պայմանագրային պարտականությունների չկատարման այլ կերպ փոխհատուցելու ծածկույթի մեծության ազդեցությունը (ներկայացվում է մրցույթի մասնակցի կողմից) գնահատվում է պայմանագրի գումարի նկատմամբ 1-ից 3 միավոր, կախված մինչև 5 տարվա ժամանակահատվածում

աուդիտի եզրակացության որևէ դրույթի սխալի, անճշտության կամ խեղաթյուրման փաստի ի հայտ գալու դեպքում, պայմանագրային արժեքի.

ա. 5%՝ 1 միավոր

բ. 10%՝ 2 միավոր

գ. 15% և ավելի՝ 3 միավոր:

8) Աուդիտորական կազմակերպության Հայաստանի Հանրապետությունում ճանաչվածության աստիճանը (հեղինակությունը)՝ գնահատվում է 1-2 միավոր, Հանձնաժողովի սուբյեկտիվ հիմնավորմամբ:

## ԳԼՈՒԽ 13. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

45. Մրցութային առաջարկությունների ֆինանսական փաթեթի մասով մրցակցությունը շարունակում են այն մասնակիցները (մասնակիցը), ովքեր տեխնիկական փաթեթի առաջարկության մասով հավաքել են 17 և ավելի միավոր (առավելագույն հնարավոր 21 միավորից): Նշված մասնակիցներն անցնում են երկրորդ փուլ:
46. Մրցույթի երկրորդ փուլում ուսումնասիրվում է առաջին փուլն անցած մասնակիցների կողմից առաջարկվող ֆինանսական փաթեթը: Ընդ որում, Հանձնաժողովը կարող է բանակցել երկրորդ փուլ անցած տեխնիկական չափանիշների գնահատման արդյունքում առավել միավոր հավաքած երկու մասնակցների հետ՝ գնային առաջարկի վերաբերյալ: Հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, ում գնային առաջարկն ի վերջո կլինի առավել ցածր:

## ԳԼՈՒԽ 14. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

47. Մրցույթի արդյունքներն ամփոփելիս Հանձնաժողովը հաշվի է առնում Բանկի տարեկան բյուջեով սահմանված աուդիտորական ծառայության վճարի առավելագույն ընդունելի մեծությունը: Եթե առաջարկները գերազանցում են նշված մեծությունը, ապա Բանկը կարող է իրականացնել նոր մրցույթ:
48. Հանձնաժողովը մրցույթի արդյունքներն ամփոփելուց հետո եռօրյա ժամկետում կայացած մրցույթի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնում է Բանկի Վարչությանը, որը դրանք ստանալուց հետո 10 օրյա ժամկետում հրավիրում է նիստ և կայացած նիստի արդյունքներով եզրակացություն է տալիս Բանկի Խորհրդին, իսկ վերջինս որոշում է կայացնում մրցույթում հաղթած աուդիտորական կազմակերպությանը Բանկի բաժնետերերի Տարեկան ընդհանուր Ժողովի հաստատմանը ներկայացնելու վերաբերյալ:

49. Եթե Ընդհանուր Ժողովը չի հաստատում աուդիտորական կազմակերպությանը, ապա Հանձնաժողովը 10 աշխատանքային օրվա ժամկետում հայտարարում և իրականացնում է նոր մրցույթ՝ պահպանելով Կարգի դրույթները:
50. Մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահից Բանկը հնարավորություն է ընձեռում մասնակիցներին ծանոթանալու Կարգին:

## ԲԱԺԻՆ III. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### ԳԼՈՒԽ 1. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

51. Կարգով սահմանված գործընթացներում ներգրավված Բանկի աշխատողներն անհատական պատասխանատվություն են կրում Բանկի ներքին իրավական ակտերով, նրանց հետ կնքված աշխատանքային և նյութական պատասխանատվության պայմանագրերով՝ Կարգով նրանցից յուրաքանչյուրի համար սահմանված աշխատանքային պարտականությունները ճշգրիտ և պատշաճ չիրականացնելու համար:

### ԳԼՈՒԽ 2. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

52. Կարգի պահանջների պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Բանկի Աշխատակազմի ղեկավարը, իսկ վերահսկողությունը՝ Ներքին աուդիտի վարչությունը: